ԱՇԽԱՐՀԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ Գ. Գ.

Անցյալ դարի վերջերից տարբեր գիտություններ առավել քան կարեվորում են ռեկրեացիայի (լեհերեն *rekreacja* - հանգիստ, լատիներեն՝ *recreatio* – վերականգնում)՝ հանգստի, աշխատանքի ընթացքում վատնված մարդկային ուժի վերականգնման, զբոսաշրջության կազմակերպման, դրա զարգացման ու հեռանկարների հետազոտությունը: Այս իմաստով աշխարհագրական գիտությունների համակարգն ավելի մեծ պատասխանատվություն և անելիք ունի: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ռեկրեացիոն համակարգերի տարածքային կազմակերպմանը:

Քննարկենք ռեկրեացիոն գործունեության տարածքային կազմակերպման սոցիալ-տնտեսական գործոնները:

Հանգստի և զբոսաշրջության կազմակերպման, ղեկավարման, պլանավորման վրա ազդում են բազմաթիվ, առանձնապես սոցիալ-տնտեսական գործոններ: Պայմանականորեն դրանք կարելի է բաժանել երկու մեծ խմբի.

- ռեկրեացիոն գործունեության կազմակերպման անհրաժեշտություն ծնող գործոններ, այսինքն՝ հանգստի կազմակերպման հնարավորությունն ապահովող գործոններ,
- հանգստի կազմակերպումն իրականացնող գործոններ:

Պետք է տարբերել այդ գործոնների ազդեցությունը տարածքային ռեկրեացիոն գործունեության վրա ընդհանրապես և հանգստի համակարգի տարածքային տեղայնացման վրա՝ մասնավորապես:

Ռեկրեացիոն գործունեության կազմակերպման անհրաժեշտություն ծընող գործոններ: Շատ գիտնականներ են փորձեր կատարել համակարգել այդ գործոնները[1]: Սրանց մեջ առաջատարներն են երկրի արտադրողա-

[1] Տե՛ս **Преображенский В. С., Шеломов Н. П.,** *Проблемы использования естественных ресурсов для отдыха и туризма (Известия АН СССР, серия географическая [(այսուհետև՝ Изв. АН СССР), 1967, N 5)];* **Герасимов И. П., Преображенский В. С.,** *Территориальные аспекты организации индустрии отдыха и туризма (Проблемы развития индустрии туризма, Новосибирск, 1970);* **Нефедова В. Б., Смирнова Е. Д., Швидченко Л. Г.,** *Методы рекреационной оценки территорий (Вестник Московского университета, сер. геогр. 1973, N 5); Зорин И. В., Метод определения уровня рекреационной специализации места (Ресурсы, среда, расселение, М., 1974);* **Костровицкий А.,** *Системный подход к исследованиям рекреации (Рациональное использование природных ресурсов и охрана окружающей среды, М., 1977);* **Пирожник И. У.,** *Применение анализа для рекреационной оценки территорий (Изв. АН СССР, 1975, N 2);* **Чижова В. П., Смирнова Е. Д.,** *Слово об отдыхе. Проблемы рекреации и охраны природы, М., 1976;* **Мироненко Н. С., Твердохлебов М. Т**., *Рекреационная география, М., 1981,* և ուրիշներ:

կան ուժերի զարգացումը, նյութական ապահովվածության բարձրացումը և բնակչության զարգացածության աստիճանը:

Արտադրողական ուժերի զարգացումն ազդում է ընդհանուր բյուջեի և ազատ ժամանակի վրա: Եթե նախորդ դարի կեսերին ժամանակի 56 %-ը աշխատավորը տրամադրում էր աշխատանքին, 33 %-ը՝ քնին, և 11 %-ը միայն հանգստին, ապա այժմ զարգացած երկրներում աշխատանքը կազմում է ընդհանուր ժամանակի 10-25 %-ը, քունը՝ 33 %-ը, և ոչ աշխատանքային ժամանակը՝ 39-40 %-ը: Ազատ ժամանակը ներառում է արձակուրդները, տոն և ազատ օրերը, մինչև դպրոց գնալն ու թոշակի անցնելուց հետո եղած ազատ ժամանակը:

Արտադրողական ուժերի զարգացումը և դրանց տարածքային կուտակումը արտահայտվում են նաև քաղաքային բնակչության ավելացմամբ: Այժմ աշխարհի բնակչության 1/3-ը ապրում է քաղաքում (Հյուսիսային Ամերիկայում՝ 52 %, Եվրոպայում՝ 55 %): Բնակչության այդպիսի մեծ կուտակումները քաղաքներում և հատկապես մեծ ագլոմերացիաներում ու մեգապոլիսներում, որտեղ օդը խիստ աղտոտված է, միկրոկլիման փոխված, չափազանց աղմկոտ, քիչ են արևն ու կանաչը, բացասաբար են ազդում բնակչության առողջության վրա:

Ուրբանիզացիայի անդառնալի գործընթացին հետևում է բնակչության հանգստի կազմակերպման անհրաժեշտությունը: Ուրբանիզացվող երկրներում ավելանում է ռեկրեացիոն բնական ռեսուրսների դերը: Վերջին տարիներին քաղաքային ռեկրեացիայի զարգացման միտում է նկատվում: Որքան մեծ է քաղաքի բնակչության թիվը, այնքան շատ մարդիկ են ձգտում իրենց հանգիստը կազմակերպել բնակության վայրից հեռու:

Ուրբանիզացիայի աստիճանն ունի տարածքային մեծ տարբերություններ, որն էլ արտացոլվում է ռեկրեացիոն պահանջների տարածքային անհավասարաչափ տեղաբաշխման մեջ, հատկապես կարճաժամկետ հանգըստի համակարգերի կազմակերպման տեսանկյունից:

Պետք է նշել, որ մոլորակի բնակչության արագ աճը զարգացող երկրների հաշվին է, որտեղ, սակայն, զարգացման մակարդակը դեռևս զանգվածային հանգստի կազմակերպման անհրաժեշտություն չի ստեղծել: Ռեկրեացիոն ակտիվության վրա ազդում է նաև բնակչության մասնագիտական կազմը: Հայտնի է, որ ռեկրեացիոն պահանջմունքներ ամենից առաջ ունեն ինտենսիվ աշխատանքով զբաղվող բանվորներն ու ծառայողները, ապա ուսանողները և դպրոցականները, իսկ վերջին տեղում են գյուղատնտեսության մեջ զբաղվածները:

Ժամանակակից հասարակության մեջ ոչ թե անհատները, այլ առավելապես ընտանիքն է ռեկրեացիայի հիմնական մասնակիցը: Ուստի անհրաժեշտ է հաշվի առնել ընտանիքների առանձնահատուկ ռեկրեացիոն պահանջմունքները: Դրանց են վերաբերում նաև երեխաների դաստիարակությունը և առողջության ամրապնդումը (որը պետք է իրականացվի հիմնականում դպրոցական արձակուրդների ընթացքում), ընտանիքի և

նրա առանձին անդամների՝ որևէ վայրում հանգստանալու ավանդույթներն ու սովորույթները հաշվի առնելը և այլն:

Նյութական բարեկեցության բարձրացումը դրսևորվում է բնակչության եկամուտների և ազգային եկամտի սպառողական մասի նշանակալի աճով: Ներկայումս բարձրացել է բնակչության տրանսպորտային շարժը՝ կապված հատկապես անձնական տրանսպորտային պարկի ընդարձակման հետ:

Բարեկեցության բարձրացումը կանխորոշում է հանգստի հարմարավետ պայմանների նկատմամբ պահանջների ավելացում, որոնք տանում են բնակչության ռեկրեացիոն շարժունակության նշանակալի աճի:

Բնակչության կենսամակարդակի բարձրացումը էականորեն ազդում է ռեկրեացիոն պահանջարկի ձևավորման և որակական բնութագրի վրա. դրանով էլ ռեկրեացիոն համակարգերի որակական չափանիշները ցույց են տալիս բնակչության զարգացման մակարդակը: Ավտոմոբիլիզացումը և կրթական մակարդակը, օրինակ, առավել դինամիկ են, քան եկամուտների մակարդակը և բնակչության տարիքային կազմը: Ռեկրեացիոն գործունեության կազմակերպման անհրաժեշտություն առաջացնող կարևորագույն գործոն են նաև օտարերկրյա զբոսաշրջիկների և տեղացի հանգստացողների միջև փոխհարաբերությունները:

Ռեկրեացիոն պահանջարկն իրականացնող սոցիալ-տնտեսական գործոններ*:* Շատ հեղինակներ[2] համակարծիք են ռեկրեացիոն գործունեության պահանջմունքների իրականացումը որոշող սոցիալ-տնտեսական գլխավոր գործոնները բնորոշելիս. դրանցից են՝ տրանսպորտային հասանելիությունը, ռեկրեացիոն ձեռնարկությունների քանակը, որը կբավարարի հոծ տարեշրջանի պահանջարկը, ազատ ժամանակի անցկացմանն ուղղված ինֆրակառուցվածքների զարգացածության աստիճանը, աշխատանքային ռեսուրսների առկայությունը և այլն: Իրականացնող գործոններից շատերը խորապես բացահայտվում են *տնտեսաաշխարհագրական* դիրք կատեգորիայի օգտագործմամբ: Ամբողջությամբ վերցրած՝ տարածքի ռեկրեացիոն գործունեության կազմակերպման վրա սոցիալ-տնտեսական բոլոր գործոնների ազդեցությունն իրականացվում է ռեկրեացիոն ծառայությունների ձեռնարկությունների ցանցի տարածքային տեղաբաշխման և զարգացման միջոցով: Ռեկրեացիոն ծառայությունների ցանցը, մի կողմից, հանդես է գալիս որպես իրականացնող սոցիալ-տնտեսական գլխավոր գործոն, մյուս կողմից՝ մնացած բոլոր գործոնների միասնական փոխազդեցության արդյունքն է:

Ազատ ժամանակը՝ որպես ռեկրեացիոն համակարգերի տարածքային կազմակերպման գործոն*:* Սոցիոլոգները հետազոտել են ժամանցը՝ որպես մարդկանց գործունեությունն ազատ ժամանակ:Որպես օրենք՝ նրանք ժամանակն ուսումնասիրում են տարածությունից դուրս, չնայած ակնհայտ է, որ ազատ ժամանակի օգտագործման խնդիրը չի կարող չընհաշվարկվել տարածքային շերտավորմամբ և ռեկրեացիոն գործընթացների հետ հորիզոնական կապերով: Ազատ ժամանակը՝ հանգստի տարածքային կազմակերպման գործոնը, պետք է լուսաբանվի որպես գիտական

[2] Տե՛ս նույն տեղում:

կատեգորիա՝ ժամանակագրական, կառուցվածքային, աքսիոլոգիական (արժեքային) և գործառական տեսանկյուններից[3]:

Ժամանակագրական հայեցակետ։Ազատ ժամանակի ժամանակագրական *հայեցակետը* բնութագրվում է հասարակության, սոցիալական խմբերի և առանձին անհատների ազատ ժամանակի դինամիկությամբ ու մեծությամբ։Հասարակության ազատ ժամանակի մեծությունը կախված է հասարակական աշխատանքի արտադրողականության մակարդակից և արտադրական հարաբերությունների բնույթից, իսկ սոցիալական խմբերի և անհատների դեպքում՝ մասնագիտությունից, աշխատանքի պայմաններից, տարիքից,սեռից և մի շարք այլ գործոններից։Հասարակության ժամանակային ֆոնդի բաշխման մեջ առանձնանում է երկու տարր՝ աշխատանքային և ոչ աշխատանքային ժամանակներ:

Ազատ ժամանակի կարևորագույն բնութագրիչներից են ճկունությունը և շարժունակությունը, որոնք կախված են ժամանակային ֆոնդից։Բացի այդ, ազատ ժամանակի և ոչ աշխատանքային ժամանակի միջև սահմանը պայմանական է։Դա բնորոշ է հատկապես գիտաշխատողներին, արվեստի մարդկանց և չնորմավորված աշխատաժամանակով աշխատողներին:

Հասարակության ազատ և ռեկրեացիոն ժամանակների աճը պահանջում է ռեկրեացիոն մեծ տարածքներ: Հանգստի տարածքների ժամանակակից բեռնվածությունը վկայում է այն մասին, որ ռեկրեացիոն համակարգերի հնարավորությունների համեմատ՝ ազատ ժամանակն աճել է:

Կառուցվածքային հայեցակետ։Ազատ ժամանակի կառուցվածքային *հայեցակետը*, առաջին հերթին, պայմանավորված է մարդու կենսագործունեության ռիթմով, այսինքն՝ օրվա, շաբաթվա, տարվա և ամբողջ կյանքի ազատ ժամանակով, երկրորդ հերթին՝ ազատ ժամանակ ունեցող սուբյեկտով՝ հասարակությունով, սոցիալական խմբով, անհատով:

Ռեկրեացիոն գործունեության արդյունավետությունը կապված է ամենօրյա, շաբաթական ու արձակուրդային փուլերի կարգավորման և համադրության հետ: Շատ երկրներում լայն կիրառություն ունի քաղաքաբնակների համար □երկրորդ բնակարանների□՝ ամառանոցների ստեղծումը մերձքաղաքային և նույնիսկ հեռավոր շրջաններում:

Աքսիոլոգիական (արժեքային) հայեցակետ: Ազատ ժամանակի այս *հայեցակետ*ը, նախ, բնութագրում է հասարակության մեջ ազատ ժամանակի դերն ու տեղը, ապա բացահայտում մարդու ազատ ժամանակի և աշխատանքային գործունեության փոխպայմանավորվածությունը:

Գործառական հայեցակետ։Ազատ ժամանակի գործառական *հայեցակետ*ը կապված է ռեկրեացիոն գործունեության տեսակների նշանակվածության բացահայտման հետ: Սոցիոլոգիայում առանձնանում են ազատ ժամանակի *համալիր գործառույթ,* այսինքն՝ *մարդու ֆիզիկական, հոգեբանական և մտավոր ուժերի վերականգնման և մարդու զարգացման*

---

[3] **Зворовский Г. Е.,** *Пространство и время как формы социального бытия, Свердловск, 1974.*

գործառույթ հասկացությունները: Սոցիոլոգները մշակել են նաև ազատ ժամանակի մի քանի տիպի զբաղմունքներ.

1. հասարակական օգտակար գործունեություն,
2. հոգևոր պահանջմունքների բավարարում,
3. հանգստի տարբեր տեսակներ. ակտիվ՝ մարմնակրթություն, սպորտ, տուրիզմ, զվարճանքներ և այլն կամ պասիվ հանգիստ:

Այսպիսով՝ վերոգրյալ գործոններն էական դեր ունեն ռեկրեացիոն համակարգերի տարածքային կազմակերպման հարցում:

ФАКТОРЫ, ВОЗДЕЙСТВУЮЩИЕ НА РЕГИОНАЛЬНУЮ ОРГАНИЗАЦИЮ РЕКРЕАЦИОННЫХ СИСТЕМ

НУРИДЖАНЯН Г. Г.

Резюме

С конца прошлого века различные отрасли науки придают наиважнейшее значение исследованию рекреации – отдыха, восстановления потраченных в процессе труда человеческих сил, организации туризма и перспектив его развития.

В свете сказанного большая ответственность возлагается на систему географических наук, в частности, на региональную организацию рекреационных систем.